

Անվտանգության կանոններ

Կանխիկի ստացման ժամանակ անհրաժեշտ է հիշել.

- ⇒ Օգտվեք միայն այն բանկոմատներից, որոնք գտնվում են մարդաշատ և լավ լուսավորված վայրերում:
- ⇒ Երեք անգամ սխալ PIN մուտքագրելու դեպքում Ձեր քարտը առգրավվելու է բանկոմատի կողմից: Սա անվտանգության միջոց է, այն դեպքերի համար, երբ կորցված կամ գողացված քարտով փորձում են գուշակել Ձեր PIN կոդը:
- ⇒ Եթե Դուք մուտքագրել եք սխալ PIN և քարտը առգրավվել է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ բանկոմատներում, դիմեք Երեք և Ձեր քարտը կվերադարձվի՝ անձը հաստատող փաստաթղթի ներկայացման պայմանով: Այս դեպքում բանկը կատարում է քարտի ապաբլոկավորում:
- ⇒ Եթե քարտը առգրավվել է այլ բանկի բանկոմատում, ապա դիմեք այն բանկին, որին պատկանում է տվյալ բանկոմատը: Քարտը ստանալու անմիջապես հետո զանգահարեք ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ և խնդրեք ապաբլոկավորել Ձեր քարտը: Որոշ դեպքերում, բանկը կարող է հրաժարվել տրամադրել Ձեր քարտը՝ հիմնվելով ներքին կանոնակարգերի վրա: Այս դեպքում, Դուք պետք է դիմեք ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ նոր քարտի տրամադրման համար:
- ⇒ Բանկոմատից գումար ստանալուց առաջ ուշադրություն դարձրեք կանխիկի տրամադրման պատուհանիկին: Խարդախություն անելու տարածված մեթոդներից է այդ պատուհանիկը կաշող ժապավենով (սկոտչով) փակելը: Սա կանխարգելում է բանկոմատից կանխիկի ստացումը և գործարքի կատարումից հետո կանխիկ չստանալով քարտապանը կարող է ենթադրել, որ բանկոմատը անսարք է: Իրականում, քարտապանի հեռանալուց անմիջապես հետո զեղծարարները պատռում են կաշող ժապավենը և վերցնում են կանխիկը:
- ⇒ Բանկոմատից օգտվելուց առաջ ուշադրություն դարձրեք բանկոմատի ստեղծաշարին: Այն կարող է պատված լինել թափանցիկ միկրոսխեմայով, որը ֆիքսում է մուտքագրվող PIN կոդը: Նմանատիպ սարք կարող է նաև գտնվել քարտի ներմուծման համար նախատեսված պատուհանիկում: Այսպիսի սարքավորումների կիրառումը լրջորեն վտանգում է Ձեր քարտի անվտանգությունը:
- ⇒ Հիշեք, որ որոշ երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, բանկոմատները մեկ գործարքից կարող են տրամադրել սահմանափակ գումար, սովորաբար մինչև 200 կամ 300 ԱՄՆ դոլարի շրջանակներում: Նաև հիշեք, որ Ձեր քարտով կարելի օրեկան ստանալ կանխիկ գումար առավելագույնը 5 անգամ: Եթե կանխիկի ստացման գործարքների քանակը չբավարարի Ձեզ, կարող եք անմիջապես զանգահարել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ և խնդրել ավելացնել կանխիկի ստացման գործարքների քանակը՝ Ձեր գաղտնաբառի ստուգման պայմանով:
- ⇒ Հիշեք, որ նաև սահմանված է Ձեր քարտով օրեկան կանխիկի ստացման առավելագույն գումարի լիմիտ՝ կախված քարտի տեսակից: Բանկոմատից կանխիկի ստացման գործարքի մերժման պատճառ կարող է հանդիսանալ նաև օրեկան կանխիկի ստացման առավելագույն գումարի գերազանցումը: Այս պարագայում ևս, կարող եք զանգահարել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ և խնդրել ավելացնել տվյալ սահմանաչափը:
- ⇒ Կանխիկի ստացումը հնարավոր է ոչ միայն բանկոմատներից, այլ նաև բանկերի մասնաճյուղերում գտնվող կանխիկի տրամադրման կետերից: Ի տարբերություն բանկոմատների, կանխիկի տրամադրման կետերում PIN կոդի ներմուծման փոխարեն կարող է պահանջվել անձ հաստատող փաստաթղթի ներկայացում:

Վճարումների կատարման ընթացքում անհրաժեշտ է հիշել.

- ⇒ VISA քարտով կարող եք վճարում կատարել այն խանութներում, ռեստորաններում, հյուրանոցներում կամ այլ առևտրի ու սպասարկման կետերում, որտեղ փակցված է VISA լոգոտիպը:
- ⇒ VISA քարտով կարող եք վճարել կոմունալ վարձերը, մասնավորապես էլեկտրաէներգիայի, ինչպես նաև գազի, տեղային, միջազգային և քջջային հեռախոսների վարձերը:
- ⇒ Քարտով վճարում կատարելիս կարող եք գերազանցել Ձեր հաշվին եղած միջոցները, եթե վճարման կատարման համար չի պահանջվում հավաստագրում ժամանակի ռեալ ռեժիմում: Այս դեպքում տեղի է ունենում քարտային հաշվի գերաժախս, որի նկատմամբ բանկը հաշվարկում է վարկային գծի օգտագործման համար նախատեսված տոկոսագումարները՝ համաձայն բանկի սակագների:
- ⇒ Քարտով վճարում կատարելիս, մինչև անդորրագիրը ստորագրելը, հավաստիացեք, որ անդորրագրում նշված գումարը համապատասխանում է Ձեր գործարքի գումարին:

- ⇒ Քարտով կատարված գործարքների անդորրագրերը անհրաժեշտ է պահպանել գործարքի կատարման օրվանից հետո առնվազն երեք ամիս:
- ⇒ Քարտով վճարում կատարելիս միշտ պահեք քարտը Ձեր տեսադաշտում:
- ⇒ Եթե հրաժարվում եք գնումից, ապա պահանջեք չեղյալ համարել (VOID) Ձեր վճարումը և պահեք գործարքի չեղյալ համարելու անդորրագիրը մինչև հերթական քաղվածքի ստացումը:
- ⇒ Հիշեք, որ սահմանված է Ձեր քարտով մեկ վճարման առավելագույն գումարը՝ կախված քարտի տեսակից: Գործարքի մերժման պատճառ կարող է հանդիսանալ տվյալ սահմանաչափի գերազանցումը: Դուք կարող եք զանգահարել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ և խնդրել ավելացնել տվյալ սահմանաչափը:

Քարտի կորուստի կամ գողության դեպքում անհրաժեշտ է.

- ⇒ Ձեր քարտի կորստի կամ գողության հայտնաբերման դեպքում անմիջապես զանգահարեք ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ 56 85 88 կամ 44 03 80 հեռախոսահամարով և հայտնեք քարտի կորստի մասին: Ձեր զանգից անմիջապես հետո քարտի գործողությունը դադարեցվելու է:
- ⇒ Հիշեք, որ քարտի կորստի մասին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿԻՆ տեղեկացնելու հետաձգումը կարող է հանգեցնել Ձեր քարտով այլ անձանց կողմից գործարքների կատարմանը:
- ⇒ Հիշեք, որ PIN կոդով կատարված բոլոր գործառնությունների պատասխանատվությունը կրում է քարտապանը: Ապահովեք Ձեր PIN կոդի գաղտնիությունը՝ օգտվելով ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿԻ խորհուրդներից:
- ⇒ Դուք պատասխանատվություն եք կրում քարտով կատարված բոլոր գործառնությունների համար մինչև այն պահը, երբ տեղեկացրել եք բանկին քարտի կորստի կամ գողություն պատճառով քարտի գործողությունը դադարեցնելու անհրաժեշտության մասին:
- ⇒ Քարտի գործողության դադարեցումից հետո բացառվում է Ձեր քարտով կանխիկ գումարի ստացումը կամ հավաստագրում պահանջող վճարումների կատարումը քարտով: Սակայն, սա չի բացառում Ձեր քարտի գործողությունը դադարեցնելուց հետո հավաստագրում չպահանջող գործարքների կատարումը Ձեր քարտով: Խուսափելու համար Ձեր քարտով այս տիպի գործարքների կատարումից անհրաժեշտ է տեղադրել Ձեր քարտը Visa համակարգի կասեցման ցուցակում, որը ստուգվում է առևտրի կամ սպասարկման կետերում հավաստագրում չպահանջող գործարքների կատարումից առաջ:
- ⇒ Քարտի կորստի մասին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿԻՆ բանավոր տեղեկացնելուց 7 օրվա ընթացքում անհրաժեշտ է բանկ ներկայացնել գրավոր դիմում քարտի կորստի կամ գողության հանգամանքների մասին տեղեկատվությամբ:

Անկախ Ձեր գտնվելու վայրից՝ Դուք կկարողանաք օգնություն ստանալ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Հայտնելով քարտի կորստի կամ գողության մասին՝

- ✓ Ձեր քարտը կբլոկավորվի,
- ✓ Ցանկության դեպքում շտապ կտրամադրվի ժամանակավոր քարտ կամ կանխիկ դրամ*:

Դրա համար անհրաժեշտ է միայն հայտնել հետևյալ տվյալները.

- ❖ Քարտը թողարկած բանկի անվանումը,
- ❖ Քարտի տեսակը (օր.՝ VISA Classic),
- ❖ Երկիրը, որտեղ թողարկվել է քարտը,
- ❖ Քարտի 16-նիշանոց համարը,
- ❖ Ձեր անուն, ազգանունը,
- ❖ Հասցեն և տան հեռախոսահամարը,
- ❖ Գաղտնաբառը: